Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը ենթակա է մերժման, հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

***Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, ևս պետք է համարել լուծված:***

***5. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.***

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝* ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

## IV
## (ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

*Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը*

## Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԷՍԶԵԹ ՖԱՐՄԱ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևան>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի՝ <<Երևան>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի <<ՍԳԻ-ՀԲՄԱՊՁԲ-23/05>> ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի կողմից 12.05.2023 թվականին կազմված հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով՝ <<ԷՍԶԵԹ ՖԱՐՄԱ>> ՍՊԸ-ի հայտի ապահովումը գանձելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
4. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2023.07.27 11:29:02 AMT **Ա. ՕՀԱՆՅԱՆ**